

☐ **Օսնուցում**

Մինչև 2011 թվականի հունվարի 1-ը կիրառվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի այն ձևերը և դրանց լրացման կարգը, որոնք նախատեսված են միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման և ժամանակավոր արտահանման նպատակների համար:

ՄԱՔՄԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԱՔՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԻ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2010
թվականի

թիվ 422

քաղ. Մոսկվա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԱՔՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԻ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության հանձնաժողովը **որոշեց.**

1. Հաստատել տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրի ձևը և Տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագիրը լրացնելու կարգի վերաբերյալ» ցուցումները (այսուհետ, համապատասխանաբար՝ Ձև և Ցուցումներ) (կից ներկայացվում են):

2. Սահմանել, որ Ձևն ու Ցուցումներն ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2011 թվականի հունվարի 1-ը կիրառվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի այն ձևերը և դրանց լրացման կարգը, որոնք նախատեսված են միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման և ժամանակավոր արտահանման նպատակների համար:

Մաքսային միության հանձնաժողովի անդամները՝

Բելառուսի
Հանրապետությունից

Ղազախստանի Հանրապետությունից

Ռուսաստանի
Դաշնությունից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մաքսային միության
հանձնաժողովի 2010
թվականի
հոկտեմբերի 14-ի թիվ
422 որոշմամբ

Տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրի ձև

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԱՔՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ Ը

Ներմուծում - <input type="checkbox"/> Արտահանում - <input type="checkbox"/>		2. Գրանցման համարը		
Տրանսպորտային միջոց՝		գրանցման		
մակնիշը, մոդելը	տեսակը	գրանցման համարը	երկիրը	նույնականացման համարը

Ապրանքների փոխադրումն իրականացնող անձը

րանսպորտային միջոցի օգտագործման համար պատասխանատու անձը

Երթուղին		6. Անձնակազմը		
7. Ուղևորները		8. Պաշարները		9. Ապրանքի վերաբերյալ տեղեկությունը
Այո - <input type="checkbox"/>		Այո - <input type="checkbox"/>		Այո - <input type="checkbox"/>
Ոչ - <input type="checkbox"/>		Ոչ - <input type="checkbox"/>		Ոչ - <input type="checkbox"/>

յ). Պահեստային մասերը և սարքավորումը

յո - Ոչ -

1. Ներմուծման /արտահանման պատակը	12. Լրացուցիչ տեղեկություններ
3. Տեղեկություններ հայտնող անձի ստորագրությունը _____ լրացման մասաթիվը _____	

ՄԱՔՄԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

	B	C
ամանակավոր ներմուծում (արտահանում) ձևակերպած մաքսային մարմինը	Ժամանակավոր ներմուծման (արտահանման) ընթացակարգի ավարտը ձևակերպած մաքսային մարմինը	Միջանկյալ մաքսային մարմինը
ՄՄՀ-ի գրանցման մասաթիվը	ՏՄՄՀ-ի գրանցման մասաթիվը	Մաքսային գործառնություն իրականացնելու մասաթիվը
աքսային հսկողության ևերը	մաքսային հսկողության ձևերը	Մաքսային հսկողության ձևերը
ամանակավոր ներմուծման ժամկետը		Ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը
Հատուկ նշումներ	Հատուկ նշումներ	Հատուկ նշումներ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մաքսային միության

**Ցուցումներ տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագիրը լրացնելու
կարգի վերաբերյալ**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Ցուցումները մշակվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 180-րդ և 350-րդ հոդվածներին համապատասխան և դրանցով սահմանում են տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրի (այսուհետ՝ ՏՄՄՀ) գրավոր լրացման կարգը:

2. ՏՄՄՀ-ն կազմված է «A4» ձևաչափի թերթից՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձևով:

ՏՄՄՀ-ն լրացվում է մեծատառ՝ տպող սարքերի օգնությամբ կամ ձեռքով՝ տպատառ, ընթեռնելի և չպետք է պարունակի ջնջումներ, ուղղումներ ու շտկումներ:

Թույլատրվում է օտարերկրյա անձանց անվանումների և հասցեների նշումը կատարել լատինատառ: Միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի համարները (այսուհետ՝ ՄՓԻՏՄ) նշվում են բնօրինակի լեզվով, այդ թվում՝ օգտագործելով լատիներեն այբուբենի տառերը:

3. Եթե ՏՄՄՀ-ի վանդակներում բավարար տեղ չկա տեղեկությունները ներկայացնելու կամ մաքսային մարմնի պաշտոնատար անձի (այսուհետ՝ պաշտոնատար անձ) կողմից ծառայողական նշումներ կատարելու համար, ապա անհրաժեշտ տեղեկությունները նշվում են ՏՄՄՀ-ի դարձերեսին: Ընդ որում, ՏՄՄՀ-ի վանդակում կատարվում է նշում. «ՏԵՄ ԴԱՐՁԵՐԵՍԸ»: Թույլատրվում է նաև անհրաժեշտ տեղեկությունների մասին նշումներ կատարել լրացուցիչ թերթերի վրա, ընդ որում, ՏՄՄՀ-ի համապատասխան վանդակում կատարվում է նշում. «ՏԵՄ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԹԵՐԹԸ»:

ՏՄՄՀ-ի դարձերեսին և (կամ) լրացուցիչ թերթերի վրա նշվող տեղեկությունները վավերացվում են հայտարարատուի ստորագրությամբ, ինչպես նաև պաշտոնատար անձի կողմից՝ ստորագրություն և համարակալված անձնական կնիքի արտատիպը դնելով:

4. ՏՄՄՀ-ն ինքնագնաց և ոչ ինքնագնաց ՄՓԻՏՄ-ների, այդ թվում՝ բեռնարկերի համար լրացվում է առանձին:

5. ՏՄՄՀ-ն կարող է ներկայացվել ՄՓԻՏՄ-ի կազմի համար. եթե մյուս բոլոր տեղեկությունները բացառությամբ տրանսպորտային միջոցի մասին տեղեկությունների, վերաբերում են ամբողջ կազմին, այդ դեպքում «Տրանսպորտային միջոց» 3-րդ վանդակում յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի մասին

տեղեկությունները նշվում են նոր տողից:

6. Ժամանակավոր ներմուծված ՄՓԻՏՄ-ները Մաքսային միության միասնական մաքսային տարածքից (այսուհետ՝ մաքսային տարածք) արտահանելու և ժամանակավոր արտահանված ՄՓԻՏՄ-ները նման տարածք ներմուծելու դեպքում, որպես ՏՄՄՇ՝ մաքսային մարմին է ներկայացվում համապատասխանաբար ժամանակավոր ներմուծվող կամ ժամանակավոր արտահանվող ՄՓԻՏՄ-ների հայտարարագրման ժամանակ ներկայացված ՏՄՄՇ-ն:

7. ՏՄՄՇ-ում ներկայացված տեղեկությունները կարող են փոփոխվել և (կամ) լրացվել՝ պահպանելով Օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված պայմանները:

ՏՄՄՇ-ում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից լիազորված աշխատողի (այսուհետ՝ լիազորված անձ) կողմից՝ տպող սարքի միջոցով կամ ձեռքով՝ տպատառ՝ սխալ տեղեկությունների վրա գիծ քաշելով և նշելով (դրանց վերևում գրելով) ճիշտ տեղեկությունները:

Յուրաքանչյուր փոփոխություն և (կամ) լրացում վավերացվում է լիազորված անձի ստորագրությամբ՝ համարակալված անձնական կնիքի արտատիպը դնելով, եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն՝ տվյալ անձը պետք է ունենա կնիք, և պաշտոնատար անձի կողմից՝ ամսաթիվը, ստորագրությունը և համարակալված անձնական կնիքի արտատիպը դնելով:

Մաքսային մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել լրացնել նոր ՏՄՄՇ:

8. ՏՄՄՇ-ն ներկայացվում է մաքսային մարմին երկու օրինակից, որոնք բաշխվում են հետևյալ կերպ՝

առաջին օրինակը մնում է այն մաքսային մարմնում, որտեղ հայտարարագրվում է ՄՓԻՏՄ-ն.

երկրորդ օրինակը վերադարձվում է հայտարարատուին:

II. ՏՄՄՇ-ի լրացման կարգը

9. Հայտարարատուի կողմից լրացվում են ՏՄՄՇ-ի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ վանդակները՝ հետևյալ կարգով՝

Վանդակ 1. «Ներմուծում, արտահանում»

Վանդակը լրացվում է մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող կամ նման տարածքից ժամանակավոր արտահանվող ՄՓԻՏՄ-ի հայտարարագրման ժամանակ համապատասխան դաշտում դնելով «X» պայմանանշանը:

Վանդակը չի լրացվում մաքսային տարածքից արտահանվող՝ ժամանակավոր

ներմուծված ՄՓԻՏՄ-ների կամ նման տարածք ներմուծվող՝ ժամանակավոր արտահանված ՄՓԻՏՄ-ների հայտարարագրման ժամանակ, այն դեպքում, երբ ՏՄՄՀ-ն ներկայացվում է սույն Ցուցման 6-րդ կետին համապատասխան:

Վանդակ 3. «Տրանսպորտային միջոց»

Վանդակի «մակնիշ/մոդել» սյունակում նշվում են ՄՓԻՏՄ-ի մակնիշը և մոդելը (նման տեղեկությունների առկայության դեպքում): Սյունակը չի լրացվում ոչ ինքնագնաց երկաթուղային շարժակազմի համար:

Վանդակի «տեսակը» սյունակում նշվում է ՄՓԻՏՄ-ի տեսակը (քարշակ, կցորդ, կիսակցորդ, բեռնարկղ, լոկոմոտիվ, վագոն, ցիստեռն, լաստանավ և այլն):

Վանդակի «գրանցման համարը» սյունակում նշվում են՝

ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ պետական գրանցման համարը.

երկաթուղային տրանսպորտի համար՝ երկաթուղային շարժակազմի (լոկոմոտիվի, վագոնի, կառամատույցի, ցիստեռնի և այլն) համարը (համարները).

ծովային (գետային) տրանսպորտի համար՝ նավի անվանումը.

օդային տրանսպորտի համար՝ օդանավի կոդային համարը.

բեռնարկղի համար՝ գրանցման կամ այլ նույնականացման համար.

Վանդակի «գրանցման երկիրը» սյունակում նշվում է ՄՓԻՏՄ-ի գրանցման երկրի կրճատ անվանումը Աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

Եթե փոխադրման ժամանակ օգտագործվում է տրանսպորտային միջոցների կազմ, ապա նշվում է այն երկրի կրճատ անվանումը, որտեղ գրանցվել է այն տրանսպորտային միջոցը, որը շարժման մեջ է դրել մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները):

Եթե հայտարարագրման պահին հայտնի չէ այն երկիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, ապա վանդակի սյունակում նշվում է երկու գրո՝ «00»:

Վանդակի «նույնականացման համար» սյունակում նշվում է նույնականացման համարը («VIII») (կամ թափքի, շասսիի/շրջանակի համարը)՝ ավտոմոբիլային տրանսպորտի համար:

Վանդակ 4. «Ապրանքների փոխադրումն իրականացնող անձ»

Վանդակում նշվում են փոխադրողի լրիվ անվանումը և գտնվելու վայրը՝ ըստ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի, ինչպես նաև նրա ներկայացուցչի ազգանունը և անվան սկզբնատառերը:

Երկաթուղային տրանսպորտի համար՝ վանդակում դրվում է կայարանի

պատասխանատու աշխատողի ստորագրությամբ վավերացված՝ օրացուցային դրոշմակի արտատիպը:

Վանդակ 5. «Երթուղի»

Վանդակում նշվում են նշանակման կետը և երկիրը:

Եթե փոխադրումն իրականացվում է օդային տրանսպորտով, ապա նշվում է չվերթի համարը:

Վանդակ 6. «Անձնակազմ»

Վանդակում նշվում են տեղեկություններ անձնակազմի անդամների (նավի անձնախումբ, գնացքի բրիգադ և այլն) առկայության և նրանց ընդհանուր թվի մասին:

Վանդակ 7. «Ուղևորներ»

Վանդակում նշվում է ՄՓԻՏՄ-ում փոխադրվող ուղևորների առկայության մասին՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ»՝ համապատասխան դաշտում դնելով «X» պայմանանշանը:

Եթե վանդակում նշված է «ԱՅՈ» բառի դիմացի դաշտը, ապա նշվում է ուղևորների թիվը:

Վանդակ 8. «Պաշարներ»

Վանդակում նշվում է ՄՓԻՏՄ-ում պաշարների առկայության մասին (բացի ավտոմոբիլային տրանսպորտից)՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ»՝ համապատասխան դաշտում դնելով «X» պայմանանշանը:

Վանդակ 9. «Տեղեկություններ ապրանքի մասին»

Վանդակում նշվում է ՄՓԻՏՄ-ում ապրանքների առկայության մասին՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ»՝ համապատասխան դաշտում դնելով «X» պայմանանշանը:

Վանդակ 10. «Պահեստային մասեր և սարքավորում»

Վանդակում նշվում է ՄՓԻՏՄ-ի վերանորոգման և շահագործման համար նախատեսված պահեստային մասերի և սարքավորումների առկայության մասին՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ»՝ համապատասխան դաշտում դնելով «X» պայմանանշանը:

Եթե սյունակում նշում է կատարված «ԱՅՈ» բառի դիմացի դաշտում, ապա նշվում են պահեստային մասերի և սարքավորումների անվանումները, համառոտ նկարագրությունն ու թիվը՝ հայտարարատուի համար հարմար չափման միավորներով:

Վանդակ 11. «Ներմուծման/արտահանման նպատակը»

Վանդակում նշվում է ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծման կամ ժամանակավոր

արտահանման նպատակը՝

մաքսային տարածքում բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումն սկսելու համար.

մաքսային տարածքից դուրս բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումն սկսելու համար.

մաքսային տարածքում բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումն ավարտելու համար.

մաքսային տարածքից դուրս բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումն ավարտելու համար:

Վանդակ 12. «Լրացուցիչ տեղեկություններ»

Վանդակում կարող են նշվել լրացուցիչ տեղեկություններ:

Վանդակ 13. «Տեղեկությունները ներկայացնող անձի ստորագրությունը»

Վանդակում նշվում է հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը, ՏՄՄՀ-ն լրացնելու ամսաթիվը և դրվում է նրա ստորագրությունն ու կնիքը, եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտարարատուն պետք է ունենա կնիք:

Եթե ՏՄՄՀ-ն լրացվում է մաքսային ներկայացուցչի աշխատակցի կողմից, ապա վանդակում նշվում է նաև այն մաքսային ներկայացուցչի անվանումը, որի աշխատողն է նա, անձի՝ մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցման մասին վկայող փաստաթղթի վավերապայմանները և ժամանակավոր ներմուծվող (արտահանվող) ՄՓԻՏՄ-ների նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացման ծառայությունների տրամադրման մասին համապատասխան պայմանագրի վավերապայմանները:

III. Պաշտոնատար անձի կողմից ՏՄՄՀ-ի վանդակների լրացման կարգը

10. ՏՄՄՀ-ի 2-րդ, «A», «B», «C» վանդակները լրացվում են պաշտոնատար անձի կողմից՝ հետևյալ կարգով՝

Վանդակ 2. «Գրանցման համարը»

Վանդակում նշվում է ՏՄՄՀ-ի գրանցման համարը՝ ըստ հետևյալ սխեմայի.

XXXXXXXX/XXXXXX/XXXXXXXXXX, որտեղ՝

1

2

3

4

– 1-ին բաղադրիչ՝ այն մաքսային մարմնի ծածկագիրն է, որի գործունեության տարածքում է գտնվում ՄՓԻՏՄ-ի մեկնման վայրը կամ ժամանման վայրը:

Բելառուսի Հանրապետությունում և Ղազախստանի Հանրապետությունում ՄՓԻՏՄ-ի հայտարարագրման ժամանակ նշվում է երկրի եռանիշ թվային ծածկագիրը և մաքսային մարմնի հնգանիշ ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում և Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող Մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

Օրինակ՝

«Բելառուսի Հանրապետությունում՝ 11209103,

Ղազախստանի Հանրապետությունում՝ 39850207»,

– 2-րդ բաղադրիչ՝ ՏՄՄՀ-ի ընդունման ամսաթիվն է (օր, ամիս, տարեթվի վերջին երկու թվերը).

– 3-րդ բաղադրիչ՝ տրանսպորտային միջոցի երկնիշ թվային ծածկագիրը՝ Տրանսպորտի տեսակի և ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգչին համապատասխան.

– 4-րդ բաղադրիչ՝ ՏՄՄՀ-ի հերթական համարն է, որը տրվում է ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծումը կամ ժամանակավոր արտահանումը ձևակերպած կամ ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծումը կամ ժամանակավոր արտահանումն ավարտած մաքսային մարմնի կողմից (սկսվում է մեկ թվից՝ յուրաքանչյուր օրացուցային տարվանից) ըստ ՏՄՄՀ-ի գրանցամատյանի, որի ձևը և վարման կարգը սահմանվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Թույլատրվում է նշված վանդակում լրացուցիչ նշել այն նրբագծային ծածկագիրը (շտրիխ կոդը) կամ հատուկ պիտակը, որը տվյալներ է պարունակում գրանցման համարի մասին:

Եթե ՏՄՄՀ-ն ներկայացվում է սույն Հրահանգի 6-րդ կետին համապատասխան, ապա ժամանակավոր ներմուծված ՄՓԻՏՄ-ն մաքսային տարածքից արտահանելու կամ ժամանակավոր արտահանված ՄՓԻՏՄ-ն նման տարածք ներմուծելու դեպքում գրանցման համարը դրվում է նման ՏՄՄՀ-ին ավելի վաղ տրված գրանցման համարից հետո՝ բաժանման նշանի «/» միջոցով:

Վանդակ «A»

Վանդակի ենթաբաժինները լրացվում են այն պաշտոնատար անձի կողմից, որը ձևակերպել է ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծումը կամ ժամանակավոր արտահանումը:

Վանդակում նշվում է մաքսային մարմնի ծածկագիրը, ՏՄՄՀ-ի գրանցման ամսաթիվը, կատարվում է նշում մաքսային հսկողության ձևի մասին, նշվում է Օրենսգրքի 343-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը:

Վանդակի «Հատուկ նշումներ» ենթաբաժնում կատարվում է ցանկացած նշում՝ ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծումը կամ ժամանակավոր արտահանումը ձևակերպած պաշտոնակատար անձի որոշմամբ:

Վանդակ «B»

Վանդակի ենթաբաժինները լրացվում են այն պաշտոնատար անձի կողմից, որը ձևակերպել է ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծումը կամ ժամանակավոր արտահանման ավարտը:

Վանդակում նշվում է մաքսային մարմնի ծածկագիրը, ՏՄՄՀ-ի գրանցման ամսաթիվը, կատարվում է նշում մաքսային հսկողության ձևի մասին:

Վանդակի «Հատուկ նշումներ» ենթաբաժնում նշվում են տեղեկություններ՝ ժամանակավոր ներմուծված ՄՓԻՏՄ-ն արտահանելու կամ ժամանակավոր արտահանված ՄՓԻՏՄ-ն ներմուծելու մասին՝ կատարելով համապատասխանաբար՝ «ՄՓԻՏՄ-ն արտահանված է» կամ «ՄՓԻՏՄ-ն ներմուծված է» նշումները:

ՄՓԻՏՄ-ների նկատմամբ մաքսային ընթացակարգեր ձևակերպելու մասին՝ Օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կամ Օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ նշելով ապրանքների մասին այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան ՄՓԻՏՄ-ները ձևակերպվել են համապատասխան մաքսային ընթացակարգերով:

Վանդակ «C»

Վանդակի ենթաբաժինները լրացվում են միջանկյալ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից:

Վանդակում նշվում է մաքսային մարմնի ծածկագիրը, մաքսային գործառնությունն իրականացնելու ամսաթիվը, կատարվում է նշում մաքսային հսկողության ձևի մասին, նշվում է ժամանակավոր ներմուծման ժամկետը (դրա երկարաձգման դեպքում):

«A», «B», «C» վանդակների «Հատուկ նշումներ» ենթաբաժնում կարող են նշվել մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, այդ թվում՝ ՄՓԻՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու հիմքերը, սույն Ցուցման 11-րդ կետին համապատասխան տրված՝ ՏՄՄՀ-ի կրկնօրինակների մասին տեղեկություններ:

11. Մաքսային մարմինների այն պաշտոնատար անձինք, որոնց գործունեության տարածքում փաստացի գտնվում է ՄՓԻՏՄ-ն, կազմում են ՄՓԻՏՄ-ի հետ կապված ՏՄՄՀ-ի կրկնօրինակները՝ փոխադրողի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա, հետևյալ դեպքերում՝

ՄՓԻՏՄ-ի անջատման (կազմացրման) դեպքում, երբ ՄՓԻՏՄ-ի կազմի համար ձևակերպված է եղել մեկ ՏՄՄՀ:

ՏՄՄՀ-ի կորստի դեպքում:

ՏՄՄՀ-ի կրկնօրինակները ՏՄՄՀ-ի օրինակների ձևն ունեն:

Ընդ որում, ՏՄՄՀ-ի կրկնօրինակի «Հատուկ նշումներ» ենթաբաժնում կատարվում է «Կրկնօրինակ» գրառումը, իսկ ՏՄՄՀ-ի բնօրինակի «Հատուկ նշումներ» ենթաբաժնում կատարվում է «Տրված է կրկնօրինակ» գրառումը, այնուհետև նշվում են այն ՄՓԻՏՄ-ների գրանցման համարները, որոնց համար տրվել են ՏՄՄՀ-ի կրկնօրինակները: